

Հ. Ա. Ս. Ե.

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE (EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ՆԳԻՆՊՅՈՍ

Յարկան դրո-ոդր 30

ԱՐՏԱՍԱՅԱՆ

Յարկան փրակ 10

Բաժանորդի 3ԱԵԼՈՒՄ ԵՆՈՒ փոխարեն փոստով գեղմ պիտի ըլլան.

ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ. ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱԹԵՐԹ

Ձի հրատարակումը ձեռնարկները եւ յի՛նք տրոխր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ փակուցումները կ'ընդունուին մասնաւոր հաւանաւայնութեամբ :

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց հարաւար պիտի է դիմել նիւթագրութեան հասցեով քերթիս Մասնակարարին, որ է՛

ՊԵՐՏԻ ՓՈՓՈՂՈՒՄ

ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԵՐԻ ՕՐԵՐԸ 30 Երեսմագրութիւնը ուղղակի պատասխանատու է ԵՆ իրենց գրածներուն 30 ZUSE 20 ՓԱՐԱ ՈՂԶ 30

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻԻՆ

1. - Կարճութիւն. 2. Կարճական գործեր. 3. - Նպատակ. 4. - Արդիւնք. 5. - Ա. Բ. Տեղեկագիրներ. 6. - Հակառակորդներ. 7. - Ընկերութեան անցեալը. 8. - Ներկան. 9. - Ապագան 10. - Հ. Բ. Ը. Միութիւնը ընդհանուր գծերով. 11. - Կանոնագիր :

Հ. Բ. Ը. Միութեան ՆՊԱՏԱԿԸ երեք համառօտ՝ բայց լայնիմաստ պարբերութիւններու մէջ դրուած է : Մենք պէտք է՛ որ զանոնք մեր մոռացկոտ խաւերուն մէջ ստեպ չըլան ընող և սուրբական դարձած խօսքերուն իմաստովն ու արժէքովը ընդունինք : Այլ համոզուած ըլլալու ենք թէ՛ խօսքերու և խոստումներու իսկական արժէքը մեզմէ շատ աւելի հասկցող մէկն է որ կ'արտասանէ զայնս :

Իրաւ է. շատ հանդիպած ենք այլ և այլ չըլանակներու և տեսակցութիւններու մէջ նմանօրինակ բաներ, որոնք հոլանման անդադար կը դառնան՝ սակայն նոյն սպառնութիւնը չ'մնար մեր վրայ, երբ այդ խոստումները Պօլոս բաշայի մը բերնէն կը ըսենք, և կամ անոր ստորագրութիւնով կը նուիրագործուի այն :

Կան, ու եղան բարեմիտներ՝ որ ուղեցին իմ սոյնանման տողերս նպատակի մը վերադրել : Մեր տարբերութիւնը սա՛ կէտին մէջ կը սահմանափակուի, որ իրենք վերէն եղած հրամաններու պարտաւորիչ և ստիպողական հնազանդութեան արտայատուցիչը ընելու համար բաներ մը կ'ըսեն, իսկ ես՝ մարդը և իրերը լաւ մը սերտելէ յետոյ, իմ ազատ և անկաշխան սպառնութիւններս է որ կը յայտնեմ հրապարակաւ :

Ա. յաւանտ անհասկնալի կը մնայ ինձ համար մանաւանդ սա՛ պարտաւորան, թէ ինչո՞ւ մեր մէջ ամէն մարդու իր իսկական արժանիքին համաձայն յարգանք ընծայելու գիտակցութիւնը կը պակսի . . . : Ատեղ կուզենք. բաւական է որ ան հարուստ և գեղքի տէր ըլլայ : Կրնայի շատ ընդարձակել այս խորհրդածութիւնները, սակայն կը

փափաքեմ որ Հ. Բ. Ը. Միութեան նպատակը շատ մը նիւթերով շրջապատուած ըլլայ, որպէսզի ընթերցողները իրենց ուշադրութիւնը լարուած պահեն դէպի այն, և ինքնարեւար կարենան կշռադատել թէ՛ ո՞րչափ ընդարձակ ծրագրներու իրողործումը կը խոստանայ մեզի «Միութիւն» հետեւեալ քանի մը սեղմ տողերուն մէջ, միայն թէ՛ մենք անոր պտուղները վայելել կարենալու չափ համբերութիւն և խոհեմութիւն ունենալու ենք :

Ընկերութեան ՆՊԱՏԱԿԸ հետեւեալն է : «Յօդուած 1. Եզիպտոսի մէջ՝ Ն. Վ. Պօլոս բաշայ նուպարի նախաձեռնութեամբ հիմնուած է «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անուամբ ընկերութիւն մը, որուն նպատակն է Արիւնջի մէջ Հայ Ժողովրդեան մտայն և բարոյական զարգացմանը նպաստել, անոնց նիւթական կացութիւնը բարելոյն օժանդակել, և այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող որ և է հրատարակութիւնը քաջալերել : »

Աւելորդ պիտի ըլլայ իմ կողմէ չեղտել թէ՛ վերելի ստորագրութիւնները իմ կողմէ են, իսկ այդ ստորագրութեանը Արեւելջ՝ Հայաստանի համար ըսուած է. «մտայն» բացատրութեան չ'կարօտի թէ՛ դպրոց և ուսում կը նշանակէ. իսկ նիւթական կացութիւնը բարելոյն օժանդակելը՝ արուեստանոցներ և աշխատանոցներ հիմնել ևն :

Մեր ազգը այս օգտակար բաներուն չ'կարօտի միթէ :

ՄԻՆՉ ՄԵՆՔ ԿԸ ՊԱՐՏԵՐ

Ս. Աստուածածնի տօնին օրը Գահիրէի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ, մենք ալ, ինչպէս թուրքիոյ և արտասահմանի ամեն կողմերը, տօնեցինք Օսմ. Սահմանադրութեան վերածնունդը. Սահմանադրութիւն՝ այն ալ աստուածածին. քանի որ ո՛չ ոքին խելքէն միտքէն կ'անցնէր, եւ պէտք էր որ տօնէինք : Սահմանադրութեան վերածնունդը մեր ալ վերածնունդը ըլլալով՝ Հայ, Թիւրք. Յոյն, Արապ կրօնաւորներ և ատենախօսներ (*) մեզի պերճօրէն բացատրեցին Ազատութեան, Հաւատարմութեան, Եղբայրութեան զգրկածներու, ի մի բան ՄԱՐԻ ԸԼԼԱՆՈՒ կը վերսկսէինք : Աստի պէտք էր ամենք էր ամենք և ամենք Մեր բերկրալից աղաղակները Սուրբ տաճարին գոթելով պատուելով սաւանդանցան դէպ երկինք և թերևս երկինքէն ալ վեր : Սակայն . . . Սակայն, ի բաց առեալ Աստուածային կենցաղագիտութիւնը կը պահանջէ որ երբ թաղի մը մէջ ծանր հիւանդ մը կամ ողբվար մը գտնուի, նոյն թաղին մէջ տեղի ունենալու վրայ եղող հարսնիքի մը ցնծալից աղաղակները լռեն օրհասական խաղաղութեան առջև : Հարսնեղբ պահիկ մը կ'ինքնամոլորուին և դրացիին սուգին աղեղցութիւնը անեղծ կը պահէ գրեթէ բաժակները :

նք (*) մեզի պերճօրէն բացատրեցին Ազատութեան, Հաւատարմութեան, Եղբայրութեան զգրկածներու, ի մի բան ՄԱՐԻ ԸԼԼԱՆՈՒ կը վերսկսէինք : Աստի պէտք էր ամենք էր ամենք և ամենք Մեր բերկրալից աղաղակները Սուրբ տաճարին գոթելով պատուելով սաւանդանցան դէպ երկինք և թերևս երկինքէն ալ վեր : Սակայն . . . Սակայն, ի բաց առեալ Աստուածային կենցաղագիտութիւնը կը պահանջէ որ երբ թաղի մը մէջ ծանր հիւանդ մը կամ ողբվար մը գտնուի, նոյն թաղին մէջ տեղի ունենալու վրայ եղող հարսնիքի մը ցնծալից աղաղակները լռեն օրհասական խաղաղութեան առջև : Հարսնեղբ պահիկ մը կ'ինքնամոլորուին և դրացիին սուգին աղեղցութիւնը անեղծ կը պահէ գրեթէ բաժակները :

Ես յետինը պիտի ըլլայի մեր այժմեայ եղբայրակցութեան անվերջ խանդավառութիւնը մեզագործներուն - թէ՛ մեզագործող գտնուի - այնքան միջառանջային թշնամութեան անցալէ մը ետքը, եթէ հայրենի բուխերիկներու գագաթէն չարագոյթ վուզուններ օդը չ'մոլորացնեն, եթէ անդրերու և ազաւաներու երաններ իրենց փշաքաղով կափկափուռներով անթաղ դիակներու երկարատեւ խնջոյքներ չ'աւետէին իրարու :

Ի՞նչ կրնենք կոր «հաց» պուրջուցներուն համար : Ոչինչ . . . : Իրախճանքի մէջ մենք զմեզ այնքան մոռցած ենք որ բնագաւառի բիւրաւոր սովատանջներուն ճրգնածամային գալարումները չ'ենք տեսներ, աղեկոտոր հառաչները չ'ենք լսեր, կամ անօթիներուն ճիւղերը մեր գաւաթաբաղախոսներուն մէջ խնդրելու կը ճգնինք . . . :

Բանապետութեան արհաւիրալից օրերուն մէջ մեր հայրենակիցներէն կը թախանձէինք որ իրենց տեղերը հաստատ կենան, չըլլայ որ գաղթեն որպէսզի ետքը, երբ գայ ժամանակը - անորո՞շ, տարտամ ժամանակը - Ազգը բան մ'ըսելու, առնելիքը պահանջելու իրաւունքն ունենայ : «Ի՞նչ չ'արդուեցէ՛ք, որպէսզի ազ-

(*) Մ. Յ. Ինչպէս այլո՞ր հոս ալ մեր հայ կաթօրիկ եղբարց եկեղեցականները իրենց բացակայութեամբ փայլեցան ըստ Հոռոմաւանդ բարի սովորութեան . . . :

զը ազրի՛ կը պոռայինք : Թէև տարօրինակ, բայց վերջապէս տարամախոհական հայե մ'էր որ այս խօսքերը ըսել կուտար անոնց, ուրոնք իրենց մորթը աղատելու յաջողած ըլլալով, կորսնցնելու բան մը չ'ունէին : Անհրաժեշտ էր որ ազատութեան բազինը արիւնով ուղղուէր, այդ դեղուհին մեզի մօտեցնելու համար . . . : Եւ խեղճ ժողովուրդը հնազանդեցաւ : Նա զոհուեցաւ անընդհատ, զոհուեցաւ անտրտուն, զոհուեցաւ մինչև այսօր, ուր մենք կը լողանք բաղձացուած երանութեան մէջ, մինչդեռ նա, խեղճ և սուրբ գաւառացին, անդառնալիքն անհետացած սարսափի օրերուն կարօտը կը քաշէ . . . : Կարօտը կը քաշէ այն օրերուն, ո՛ւր գոնէ անսիրտ հրոսակներուն սուրին և գնտակին տակ մէկ անգամէն կը մեռնէր, կը մոռնար, կը հանգչէր, փոխանակ հիմա՛ անօթութեան ճիրաններուն տակ, քիչ քիչ, մաս առ մաս ան չընչանալու անողոս, խորթացած Մայր-Հողին վրայ օրերով, չարաթներով տապալակելէ, գալարուելէ, խակալէ ետքը . . . : Նեղութիւնը, իր ամենապարզ վիճակին մէջ իսկ այնքան սարսաղազեցիկ է որ ըստ իս ամենէն հզօր երեակայութիւններն անգամ չեն կրնար իրականութիւնը ներկայացնել ինչպէս որ է . . . :

Մ'վ հայրենի, ո՞վ մայրեր՝ դուք որ այս տողերը կը կարգաք խորհեցէ՛ք անգամ մը : Հոն, այդ տարաբաղդ և արիւնլուայ երկրին մէջ, հայրեր ու մայրեր, տարիներէ ի վեր բարձրուած մէջ թխմը ուսած ու փոսած խօսք կը քաշեն կոր և իրենց զաւակներուն կը կերցնեն կոր զանոնք չէ թէ կշտացնելու այլ անոնց ստամոքսը խաբելու համար . . . : Ըսել է որ երկիրը խոտ ալ չ'է բուսցըցած . մեր արգաւանդ հողերը քարացած են, և շատ կը վախճամ որ մեր սրտերն ալ այնպէս եղած չ'ըլլան : Կոտորներ կոտորները գրկած լեռ ու ձոր ինկած են որ և է սնունդ մը գտնելու համար, և մահը կը հնձէ ու կը հնձէ անգաղար . . . : Եւ մենք Ազատութեան հմայքով արբշիւ, կը գոռանք՝ «Կեցցէ՛ Հասարակութիւն, կեցցէ՛ Եղբայրութիւն : Կ'ըմբռնէ՛ք այս բառերուն բրտմանը հեզնականութիւնը մեր հոգեհատարներուն ներկայ աղիղգորմ կացութեան առջև : Ի՞նչ ընեմ այդ Ազատութիւնը, երբ անոր շնորհիւ մենք չ'ենք փութար մեր հարազատներուն օգնութեան :

Միջոց, պիտի ըսէք : Միջոցը կամ լաւ ևս միջոցները չ'են պակասիր . բարի կամեցողութիւնն է որ կը պակսի : Մտաւորապէս երկու ամիս առաջ ճամբայ մը ցցուցի, այս սիւնակներուն մէջ, անմիջա-

Այն ատեն զանոնք ալ դատա-
փետեցէ՛ք, ինչպէս ինծի կրնէք
« Միացեալին » և ուրիշներու համար
գրամական օգնութիւն ուղղել և գո-
հացում ստանալ յետոյ ալ :

Շատ աղէկ . վաղը, վաղը իսկ .
Ու հետեւեալ որը Արևին մէջ
կերևայ Աղղային Ձոյները վերնագի-
րը, որ Մկրտիչեան իր խոստումը
յարգելու համար կը գրէ . . . :

Իսկ կարճը կապելու և գոնէ ե-
րևոյթները փրկելու համար, հեռա-
գիր մը կուղղուի Պօլիս, որպէսզի
պարոնայք Վ. Թէքէեան և Միհրան
Տամատեան եթէ չ'կարենան համա-
զել Խառն ժողովը՝ ընտրութիւննե-
վերահաստատելու . եւ միթէ Խառն
ժողովին որոշումները խալալիք էին-
գոնէ մէկ երկու Պօլսական թերթե-
րու մէջ անընդ-ժիջ մը ընեն, սա՛ ի-
մաստով :

« Խառն ժողովը՝ լսելէ յետոյ
պարոնայք Վահան թէքէեան և Միհր-
ան Տամատեանը . երկուքն ալ
աղղային գործիչ . նախորդ նստի մէջ
Աղղային գործիչ թեմական երեսփո-
խանութեան նկատմամբ տուած բե-
կանու մի որոշումը ետ առաւ, և
հաստատեց կատարուած ընտրու-
թիւնները : Միտոյն թէ հաշուական
խնդիրները ն, Վ. Պօղոս բաշայի վե-
րագարծին պիտի գրուի կանանչ սե-
ղանին վրայ . . . :

Ո՛վ ծագրելութեան սպարներն-
ըը, դուք որ անգոյ նիլի մը գոյու-
թիւն կուտաք, և ներդրմէ՛ք մեր-
կապարանոց կը լրացո՛ք . . . :

Ուրիշ առթիւ աւելի ընդարձակ .
ՏԱՐԱԳՐԵԱԼՆԵՐԸ

Պօլիս հասնող տարադրեալնե-
րուն կրած տարօրինակ զրկանքնե-
րու արձագանքը հետազննելու հաս-
նի հոս չարագուշակ քօնքրով : Եթէ
կուզէք՝ քօնքրով ըսենք .

Ձեռք գիտեր ինչո՞ւ կարգ մը
մարդիկ այնքան փութկոտ գտնու-
ւեցան Պօլսոյ փողոցները դժբաղդ-
ներով լեցնելու համար մասնաւոր
ջանքեր մը ընելու . . . Ի՞նչ ան-
հասկանալի հաշիւներ կը պարու-
նակէին արդեօք այս աղղայի մե-
քերը . . . :

Օսմ . Սահմանադրութիւնը հրու-
չակուած է եղբի : Շատ աղէկ .
ատոր ըսելիք չունինք հիմալու հի-
մայ : Յարատեւութիւն և մեր պա-
հանջներուն համաձայն սրբազրու-
թիւն կը մարտնչէք : Բայց ի՞նչ կը
նշանակէր ոսկի դոյնելով զեղազար-
դել իրերը, և հրապուրել կարգ մը
բարեմիտներ՝ որ իրենց ունեցած
քիչ շատ ապրուստի միջոցն ալ ձեռ-
քէ հանելով՝ երթնէին Պօլսոյ մէջ
ձեռքերին ասոր ու անոր երկարելու
պարտաւորութիւն : Եթէ թշուառու-
թեան այդ ներկայացուցիչները քա-
նի մը ամիս վերջը, խաղաղութիւ-
նը կատարելապէս հաստատուելէ
յետոյ երթային, ի՞նչ պիտի կոր-
սնցունէին : Մի՛թէ Պօլսոյ աղղայ-
նոց արդի վիճակը կը ներէ՞ նորա-
հաս թշուառութիւններ ամօքելու :
Անոնք բոլորն ալ ջերմէ նոր ազա-
տած հիւանդներու կը նմանին . . . :

Մենք կը լսենք թէ՛ խանի մը
մէկ քանի աղտոտ սենեակներուն
մէջ խնձախընձ սկաւորիկ պէս ի-
րարու վրայ դիզուած կարօտեալնե-
րուն ըսողներ եղած են թէ՛ « Ի՞նչ
. . . սպուր ուտելու համար վաղե-
ցիք եկաք . . . »

ՈՒՐԻՇ ԽՆԴԻՐ

Կը լսենք թէ՛ իր սխալ քայ-
լերովը Աղղայացի Հոյաբարձութեան
գուռը ինկած հիւանդ մը, այս առ-
ջէն մեկնած ատեն՝ Հոյաբարձու-
թիւնը իրեն չորս ամսականները
վճարելու խոստում կուտայ և ըս-
տացական մ'ալ ստորագրել կուտայ,

որպէս թէ վճարած է դրամը :

Չ'գիտցուիր ինչո՞ւ խոստաց-
ուած դրամը Աղղայացիներէ կը զր-
կուի մէկու մը (Ս. Մ.) որպէսզի
հիւանդին տայ :

Հիւանդ մեկնողը՝ անկարող այս
ու այն կողմ ինչալու, և իր Գա-
հրէ տուած ստացականին փոխա-
րէնը Աղղայացիներէ գանձելու, ա-
ռանց դրամի կը մեկնի, ո՛վ գի-
տէ ինչ տառապանքներու ենթար-
կուելով՝ իր հիւանդագին վիճա-
կին մէջ : Մինչդեռ իր դրամը այս-
տեղ ասոր անոր ձեռք կը մնայ :

Բարեբաղդարար Աղղայացի Հո-
յաբարձութեան անդամներէն մին,
մօտէն ծանօթ մեկնող հիւանդին
ստույգ վիճակին, չափազանց կը նե-
ղանայ, աեղեկանալով որ անոր դը-
րամը յանձնուած չէ . . . ո՛ր է
պատճառաւ :

Ասիկայ ծանօթի մը գլխուն ե-
կածն է, արդեօք՝ լուսթեան մէջ
խօսելու անկարողներու վիճակէն
օգտուելով, ինչէ՛ր չ'գործուեցան
Մենք մանրամասն հաշիւներու
հրատարակութիւնը կը պահանջենք
տարադրելոց Գօմիթէէն, և այն ա-
մեն հաստատութիւններէն, որոնք
նիւթականի վերագրեալ գործ ու-
նեցան տարադրեալներուն հետ :
Պէտք է որ այս հաշիւը Պօլսոյ մէջ
կարդացուի, և վերադիտելին նման
պատասխաններ մէջ տեղ գան . . . :

Հոգ չէ թէ գօմիթէները կալ-
մուած ըլլան պէյերէ կամ բօխի-
ներէ և կամ ուրիշ անձերէ : Հան-
րութեան համար հանրութեան
դանձուած և ծախուած դրամի մը
մանրամասն հաշիւն պէտք է որ
ծանօթ ըլլայ հանրութիւնը : Ասի-
կայ գօմիթէն ներկայացնող անձե-
րուն ալ պատուաբեր է :

ՆՐՈՒՍԱՂԵՄ . . .

Կը լսենք թէ՛ Տէր Շաղոյեան
Աւետիս Բահանայ (՞) դարձի գալ
կուղէ, և իր կարգ մը աչքի ընկնող
և անբաւելի մեղքերը իր վրայէն
թօթափելու յուսով երուսաղէմ պի-
տի ուղեորի՝ կամ ուղեորած է :

Օձը իր շապիկը կը փոխէ, կ'ը-
սեն, բայց երբէք բնութիւնը : Տէր
Շաղոյեան ալ հակառակ իր շանքե-
րուն, եթէ նոյն իսկ Պրօպատիկէ
աւազանին եզերքը հինգ տասը տա-
րի ալ սպասէ՝ մաքրուելու և սըր-
բուելու համար, գարձեալ նոյնը
պիտի մնայ, ասոր վտահ եղէ՛ք :

Ապացոյց ալ կուզէք : Տամ
ձեպի : Մեղմէ շատերը ընդունած
են թէ՛ Բրիտանի Ս . Գերեզմանը
երուսաղէմ կը գտնուի, և հոն գը-
նացողը պէտք է որ ըստ ամենայնի
« պատրաստ ըլլայ » անոր յարգանք
մատուցանելու : Առաքեալը կ'ըսէ
թէ՛ « պատարագ մատուցանելէ ա-
ռաջ, գնա՛ եղբօրդ հետ հաշտուէ՛ » :
Տէր Շաղոյեան մեզի ծանօթ շատ
մը վիրաւորած սրտեր կը թողու այս
տեղ, և այդպէս ըլլալով հանդերձ՝
ո՛չ միայն հոս սեղանին վրայ « պա-
տարագ » մատուցած է, այլև՝ հի-
մայ ալ մինչև երուսաղէմ կերթայ
իր խղճին բռնորը թեթեւեղութեամբ . . .
կարելի՛ է :

Բայց ուրիշ բան մ'ալ կայ . Տէր
պապան ինքիքն վրայ շատ համա-
րում ունի, և թերևս մասնաւոր
պաշտօն մը ստանձնած է երուսա-
ղէմի համար . . . :

Մեր բոլոր բարեկամները՝ որոնք
երուսաղէմ կը գտնուին, բացար-
ձակապէս կ'զգուշացնենք, որ այդ
կեղծ բարեգործին վատթար « կեղ-
ծաւորութիւններէն » զգուշանան :

Այսպիսի բա՛ւ է Տէր պապան
իր մեղքերովը ետ դարձնելու հա-
մար :

**ՏԵՂԱԿԱՆ
ԼՈՒՐԵՐ**

— 0 —

ԳՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Բրօկրէ ակնարկելով Սեպտ . 3
թուականաւ Սալօնիկէն « Միութիւն
և Յառաջդիմութիւն » Կօմիտէի կող-
մէ Պօլսոյ թերթերուն զրկուած ըս-
պառնալից շրջաբերականը, կ'ըսէ .
« Խորապէս կը ցաւենք տեսնե-
լով որ՝ Օսմ . նոր ղեթիլը մամուլի
ազատութիւնը սեղմելու թուական
մը կը բանայ, ինչ որ ց'արդ սեփ-
հականութիւնն էր միապետական
անհետացող վարչութեան . . . »

ՀԱՄԻՈՒԼՄՈՒԹԻՒՆԸ

Տեղական Արաբ թերթերը և մա-
նաւանդ էյ-Տէքրուր կ'ըսէ թէ՛ ժէօն
թիւքերը եթէ չարունակեն իրենց
արդի քաղաքականութիւնը և հրաժա-
րին համախառնական սկզբունքներէ և
քրիստոնեաներու պաշտպանութեանն
ու համարումին ապաւինին, այն
ատեն իրենց դէմ պիտի ունենան
300,000,000 մահմետականներ,
որոնք ամէն ինչ պիտի ընեն խափա-
նելու համար ազատական թիւքե-
րու վնասակար գործունէութիւնը :

ՀԵՌԱԳԻՐ

— 4 . Պօլիս Չ սեպ . — Իշխան Սապա-
հէտին՝ որ իր հօր մնացորդները միասին
ունէր, մեծամեծ ցոյցերով ընդունուե-
ցաւ :

— 4 . Պօլիս Չ սեպ . — Հիճազի
կատավարիչ անուանուեցաւ Բեազիմ
բաշա :

— 4 . Պօլիս Չ սեպ . — Պուլկար
և Կրետացի պատգամաւորութիւններ
երէկ Ելուզի պարտէզը դաւով Սուլթանը
չնորհաւորեցին իր գահակալութեան տա-
րեգարծին առթիւ :

Սուլթանը պատուանը ելլելով ը-
սաւ որ . « կը յուսայ թէ Աստուած պի-
տի ներէ որ սահմանադրութիւնը տե-
ղեական երջանկութիւն տուայ բերէ » :
ուրիշ պատգամաւորութեան մ'ալ ըսաւ
թէ — « սահմանադրութիւնը պաշտպանել
բացարձակապէս որոշած է » :

— 4 . Պօլիս Չ սեպ . — Բրիտա-
նական գաղութը հանգանակութեան մը
ձեռնարկած է ի նպատակ Պօլսոյ նոր հըր-
դեհին արկածեալներուն :

Ետուարդ թագաւորը 500 ոսկի զը-
կած է այդ նպատակաւ :

— Սալօնիկ Յ Սեպ . — « Միու-
թիւն և Յառաջդիմութիւն » գօմիթէն
չըջարեալական մը զրկած է Պօլսոյ թեր-
թերուն, խնդրելով որ՝ գրուշանան զա-
նազան աղղութեանց զգացումները վի-
րաւորելու հանգամանք ունեցող յօդ-
ուածներ հրատարակելէ, եւ կը հրաւիրուի
կատարելապէս հրաժարիլ եգիպտոսի և
Պօսնայի գործերուն վրայ խօսելէ : Հա-
կառակ պարագային իրբու մասնիչ պիտի
նկատուին :

— Մ . Ո . — Ինչ որ ալ ըլլայ սոյն
չըջարեալականին ներքին նպատակը,
« Միութիւն և Յառաջդիմութիւն » գօ-
միթէին աղաստեղծութիւնը կասկածի ներ-
քե կը դնէ այս հետագիւրը :

4 . Պօլիս 4 Սեպ . — Բ . Ոսիվը
« Մահրուսա » զբօսանաւուն մէջ հրաւիրեց
բոլոր զեսպանները, որպէսզի ներկայ
գտնուին ուրբաթ օրուան նաւարաւորին՝
որ Սթամպուլի վերջին հրդեհի զոհե-
րուն ի նպատակ կազմակերպուած է :


— Լուսաբ 5 Սեպ . — « Թայմզ »
կը տեղեկանայ 4 . Պօլսէն թէ՛ « Միու-
թիւն և Յառաջդիմութիւն » գօմիթէն
դէմ կը կենայ աստղագէտ Ապիւլ-Հիւտաի
եգիպտոս հաստատուելուն . որովհետեւ՝
կ'ըսէ, իր եգիպտոս ներկայութիւնը

կրնայ վրդովել եգիպտական իշխանու-
թիւնները, եւ քաջաւերել յետագիւր-
կաններուն էնթրիկները :

— Պրուսա 6 Սեպ . — Յելուզակ-
չերը յարձակեցան Սպանիոյ Փոս-Հիւ-
պատոսին և Պրուսայի Օսմանեան պան-
դայի մասնաճիւղի Տնօրէնին վրայ,
որոնք Մուսանեայի մօտերը կառքով
պտոյտ կ'ընէին :

Յելուզակները կրակելով վիրաւո-
րեցին Փոս-Հիւպատոսը, որ իր կար-
գի նոյնպէս կրակելով՝ աւազակներէն
մէկը ըսպաննեց, իսկ միւսները փախու-
ն :

ՎԱՐԴ ԵՒ ՉԱՐԿ



ՏԻՎԻՆ ԼՈՒՍԻՔ Գ . ՅՈՒՆԱՐԾԾ
ՄԻՍԻՔԻ ՇԱՐԱ ՄԻՒՂԵՅԻՆ
ԼԱՏԻՆԱՅ ԵՒ ԵՆԵՂԵՑԻՆ
ՃԻՇՏ ԴԻՄՍՏԸ
ԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԾԱՆԿԵՐՈՒ
ԱՅԵԼՆԵՑ
Հարսանեկան գե-
ղակազմ պուզեներու,
չքեղ ծաղիկեղջերու,
պսակներու և քեղոյրի

(չափող) հրաշագեղ ծաղիկներ ունենա-
լու համար մի գիմէք այլուր :

Մեր գիները դիւրամառչիլի են և
սպարանքները անմրցելի :

Փորձի համար անգամ մը այցելու-
ղը, ապահովապէս մեր մնայուն յանա-
խորդը պիտի ըլլայ :

Մեր տարիներու փորձառութիւնը
այսպէս ըսել կուտայ մեզի :

31-43 ՏԻՎ . Լ . Գ . ՅՈՒՆԱՐԾԾ

ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆ

Թ՛՛ :

ՀԱՎԱՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆ

Երբ մէկը համարձակի կարգ մը
մարդոց հետ տարակարծիք գտնուել
և կամ անոնց գործերու մասին զի-
տողութիւններ ընել՝ շուտ մը իրեն
դէմ լարուած կը տեսնէ մեքենա-
կան ատելութիւն մը : Միակողմանի
մտածումը մեր մէջ այնքան խոշոր
համեմատութիւններ առած է որ՝ բառ-
մը, խօսք մը, կամ քիչ մը իրենց
անհաճոյ թուող հրատարակուած տող
մը ու է մէկին դէմ շարժման մէջ
կը դնէ շարքեր : Ես կը խորհիմ թէ
մարդիկ, ամէն պարագայի մէջ նը-
պատաւար թէ աննպաստ՝ միշտ խո-
հուն ըլլալու են, և պաղաղելն՝ ի-
րենց գատողութեան մէջ : Միւս կող-
մանէ մեքենական գատողութիւնը
մասնաւորապէս հայ յեղափոխական
շարքերուն մէջ արմատացած է : Ե-
թէ անհատի մը կամ դասակարգի
մը դէմ գիտողութիւն ընես հաղըր
նաղըր բառ մը ունին քու երեսիդ
նետեղու :

— Դուն հակա յեղափոխական ես
Աս չի՛ նմանիք չինկէնէին կնկան
« չաղամ տիւշտի ին և թուրքին
« կեալու տինիմէ սէօյտի ին » :

Ես կը հաւատամ թէ մեր կու-
սակցական մամուլը իր միակողմանի
գիրքին մէջ օգտակար չըլլալէ զատ
փաստակար ալ է : Անիկա թոյլ շտար
որ իր սիւնակներուն մէջ իրենց դէմ
տող մը, կամ բառ մը հիւրնկալուի :

Այս աններող ոգին՝ կը մղէ
շարքերը իրարու դէմ զինուել ու
միշտ լարուած մնալ : Մինչդեռ եր-
կու կողմէն լսելով փաստերը, շար-
քերը, պատեհութիւն պիտի ունե-

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿՆ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆՏԵՐՔ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՅ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է:

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը:

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարէթներու լաւագոյն կանաչանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամովաճառ ըլլալու. բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին:

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալ է:

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել սրբաձ ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անտխտելի ապացոյցներէն մին ալ կարգացած եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են:

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻ

նային վերլուծելու և որոշ եղրակացութեան մը գալու. Եթէ թիւրմացութիւններ պատահէին, շուտով ճշգրտելով փոխադարձ ներդրամութիւն պիտի յաջողէր. Յաւան է որ այնպէս չէ՛: Յեղափոխական ասպարէզը ազատ մտածելու տեղ չէ, պէտք է մեքենական կեանքը ապրել, ու մինակ լսել. խօսելը ու մանաւանդ խորհիլը արգելուած է. Խոշ ըսեն, թէ ես հակա-յեղափոխական եմ. թող ամէն ոք զիս լրտես անուանէ, թող ինչ կուզեն ըսեն. ես բարձր ձայնով կ'ազդակեմ, թէ մեր առաջնորդ համարաճանրուն մէկ մասը, գոնէ անոնք որ գործի վրայ են - մէկ մասը կ'ըսեմ, լաւ ըմբռնեցէք, և աչքի զարնող մասը - յեղափոխութիւնը գործ ըրած են:

Ինչպէս լրտեսութեան քահանաներէն մէկը կ'ըսէր թէ՛ մեր խառնութիւնը եկեղեցին է, ու դրամագրութիւնը՝ խոնկը ու մոմը և շարականը՝ նոյնպէս ալ կարգ մը առաջնորդներու համար խառնութիւնը յեղափոխութիւնն է, ու դրամագրութիւն ալ ժողովուրդին տղիտութիւնը: Ահա ատոր համար յեղափոխական խմբագիրներ ամէն միջոց ի գործ կը գնեն իրենց հեռանկները տղէտ պահելու, և խօսելու ազատութիւն չի տալու անոնց, հոգ չէ թէ իրենք Սուլթանէն խօսքի ազատութիւն, մամուլի ազատութիւն կը պահանջեն:

Իրենց հեռանկներուն տղիտութիւնը չահագործելով կը սկսին աւտելութիւն սերմանել, եղբայրասպանութիւն քաջալերել, որպէս զի շարքերը լարուած մնան իրարու դէմ:

Ատեն է որ Ձեր աչքը բանաք, ազնիւ յեղափոխական զինուորներ: Խորհեցէ՛ք որ կուսակցականներ ըլլալէ առաջ՝ հայ էք. ինչո՞ւ համար մէկ հօրմէ, մէկ մօրմէ ծնած եղբայրներուն չահերը իրարու չ'պիտի համաձայնին, Ինչո՞ւ լոկ խօսքեր ու ֆրազներ մեզ պիտի թշուաճանեն:

Ինչո՞ւ կարգ մը վարիչներ այս ինչ անհասարկ, այսինչ կուսակցութիւնը կ'ատեն ու ատել կը թիւղաբեն Ձե՞ որ անոնք ալ հայ են: Եթէ հացի խնդիր չէ, միւսոյն նպատակին ծառայել յաւանդ մարգիկ, ինչո՞ւ զերար պիտի տտէին, իրարմէ հեռու մնալով տարբեր տարբեր խմբակցութիւններ երևան բերէին: Օրինակի համար ինչո՞ւ չորս կուսակ-

ցական մարմիններ, չորս կուսակցական խմբագրութիւններ, չորս կեդրոններ, վարչութիւններ, իւրաքանչիւր քաղաքի մէջ չորսական մասնաճիւղեր գտնուէին, զորս պահելու հարկ կը բաւեն յեղափոխական անձնուրաց զոհողութիւնները, եթէ յեղափոխութիւնը ՊԻՋՆԷՍԻ վերածուած չ'ըլլար:

Յեղափոխականները հասկնալու են թէ իրենց պարտականութիւնն է գիտակցաբար ազգին շահերը պաշտենել, հայրենիքին բարօրութեան համար զոհուիլ, ու ոչ թէ տղիտաբար զիրար ատելով՝ իրենց պետերուն շահերը պաշտպանել, ու զանոնք կերակրելու և ապրեցնելու համար զոհուիլ:

Ատենն է որ մեր ձայնը լսելի ընել տանք մեր առաջնորդներուն: Եթէ չեն թուր շտկուիլ ձգենք զանոնք: Ինչո՞ւ մակարոյճներու պատճառով զիրար պիտի ատենք, և իրարու արին խմենք: Մեր այս ընթացքը յեղափոխութիւն չէ, այլ հակա-յեղափոխութիւն:

(ԱՐԾԻԻ) ՅԱԿՈՒ ԱԶՆԱՌՐԵԱՆ

Դ. ՄԱՏԵՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ Միթիարեան Գործ. Գահիրէի

Շահող թիւեր

103, 166, 133, 90, 129, 107,
85, 93, 61, 77, 36, 12, 97, 110,
13, 124, 92, 8, 191, 49, 131, 174, 6,
149, 121, 128, 200, 134, 81, 20,
32, 88, 140, 46, 48, 44, 45, 10
157, 11, 22, 25, 50, 109, 119, 130,
38, 196, 51, 63 :

Ս ՕՏԱՊԱՇԵԱՆ

ՕԹԷԼ ՏՐԱՊԻԶՈՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ

Գանթօ, Սուգուլ Մանկաի 3 Թէթի Իեթ-Էլ-Քալչանի փողոց 3 Մանկաի Մղկիթի ղեմը 3 Թիւ 3 Պանդոկապետ - Մ. Գէորգեան

Կը յանձնարարուի արդոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը գտնուող և օգուտէ տղիքով սոյն պանդոկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն:

Գիմեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք: Գիները չափաւոր են: 28-55

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅԻՉ Ժ. ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պալաքի փողոց. Խաղէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիմաց. Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հիւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԿԱՂԱԲԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ


Աչխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկերներն են ևւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է:

400 և աւելի վիսյակաւ ևւ մեքենաներով վարձատրուած, Երաշխատուող մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արտեսանակիսի մէջ ստացած է շԱՅՄԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՅ ՀԱՅՄԱՅԹԻՉ ԱՆԴՂՈՅ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԿԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ ՀԱՅՄԱՅԹԻՉ Ն. Բ. ՆՏԻՊԱՆԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկերի յաճախելի



Գին ՉԱՓԱՌՈՐ

Ձեր դասեր և նորոգութիւններ, Սինկեր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ:

Վճարմանց գիւրութիւն

Փոխանակութիւն հիներու ևւ նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

ՍԱՐԳԻՍ Յ. ԹԱՇՇԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, փօսկրափներու և կազի վառարաններու:

Տասներկու տարիներ «Սինկեր» Ընկերութեան քով մեքենայարգարութեան զբաղիլէ յետոյ, այժմ զինավաճառ Զախարիա Գոնտաանիթիւնի քով պաշտօնեայ է զենքերու և մեքենայարգարման ճիւղին մէջ:

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարպոյ ժամերը պիտի արամադրէ կարի մեքենաներու, ֆօնօկրափներու, կազի վառարաններու, նորոգութեանց ևւ յարգարման: Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու կրնան զիմել իր սուրը Պապը - Շէհրիէի կողմը Շարա Պէղղալա՝ կրնան հարցնել նաեւ Մեծ Միքարան Հայկականի Տնօրէններուն, ևւ զարձեւալիւրութեան համար քարթ քոստալով մը կրնան զիմել «Արշալոյսի» Տպարանին - նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը և Տունին թիւը:

Իր նորոգութեանց վարձը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ ևւ փորձեր կատարուելէ յետոյ: Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ:

19 - 50

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԻ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբոն վրայ կող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատուներէ միակն է որ ապրանքներու թարմութեան ևւ մաքրութեան շնորհիւ մնալուն զիրք մը բռնած է տարիներէ ի վեր:

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթիւր են սոյն վաճառատուներուն մէջ:

Մեր յաճախորդները գոն թողելու նպատակաւ՝ սպասելի ապրանքներու ընտրութեան ևւ գնումին ատեն շատ խնամք ևւ նոյն իսկ բծախնդրութիւն կընենք: Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է ևւ մաքուր մեր քով:

Կչիւրը, որուն համար ուրիշ շատ անգիր գանդաւանաց պատճառ տուած է, մեր քեզ գոնուակութիւն միայն առթած է. վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գոն մնացած են:

Ձեր տունին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար զիմեցէք ի Պապ-Էլ-Խալի մեր վաճառատեղին ևւ չ'պիտի զղջաք:

16-41 ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍՍՐՃԵԱՆ